

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ /7-րդ դասարան - Խնդիրներ 2/

1. 1 համարիչով և տարբեր հայտարարներով երեք կոտորակների գումարը հավասար է 1-ի: Գտնել այդ կոտորակները:
2. 8 մատիտ գնելու համար Աշխենին պակասում է 10 դրամ: Եթե նա գնի 6 մատիտ, ապա նրա մոտ կմնա 30 դրամ: Որքան դրամ ունի Աշխենը:
3. Երեք որսորդներ նախաճաշի ժամանակ եփեցին շիլա: Նրանցից մեկը տվեց իր մոտ եղած երկու բաժակ բրինձը, երկրորդը՝ իր մոտ եղած մեկ բաժակ բրինձը: Նրանք շիլան կերան հավասարապես: Երրորդ որսորդը, որն իր մոտ բրինձ չէր ունեցել, նախաճաշի համար տվեց 8 փամփուշտ: Ինչպես բաժանել այդ փամփուշտները առաջին և երկրորդ որսորդների միջև:
4. 1-ից 7 թվերը տեղադրել շրջանակներում այնպես, որ \bigcirc
յուրաքանչյուր ուղղի վրա գտնվող երեք թվերի գումարը $\bigcirc \bigcirc \bigcirc$
հավասար լինի 12-ի: $\bigcirc \quad \bigcirc \quad \bigcirc$
5. Երբ հայրս 36 տարեկան էր, ես 8 էի, իսկ հիմա հայրս ինձնից 2 անգամ մեծ է: Քանի տարեկան է հայրս:
6. Թիվը 3-ի և 6-ի բաժանելիս ստացված մնացորդների գումարը հավասար է 7-ի: Գտնել այդ մնացորդների արտադրյալը:
7. Ապացուցել, որ ֆուտբոլի թիմում կան երկու հոգի, որոնք ծնվել են շաբաթվա միևնույն օրը:
8. Հնարավո՞ր է արդյոք 10 հատ 1, 3 և 5 արժողությամբ կոմպեկներով ստանալ 25 կոպեկ:
9. Հայտնի է, որ $7x+3y$ -ը բաժանվում է 21: ապացուցել, որ $14x+9y$ -ը ևս բաժանվում է 21 -ի: